British Embassy Yerevan

Sweden Sverige

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

UNDP Empowered lives. Resilient nations.

UKaid from the British people

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն International Center for Human Development

WFD WESTMINSTER FOUNDATION FOR DEMOCRACY

oxYGen

ԱԺ - ՔՀԿ համագործակցության բաց հարթակ

Գնահատման զեկույց

Դեկտեմբերի 19-20, 2019
ք. Ծաղկաձոր

Գնահատման հիմքերը

Վերլուծության են ենթարկվել.

- Հարթակի փոխըմռնման հուշագիրը
- Հարթակի բոլոր հանդիպուների մասնակիցների ցուցակները
- Հարթակի բոլոր հանդիպումների օրակարգերը և ամփոփաթերթերը
- Հարթակի մասնակիցների պատասխանները գնահատման հարցաշարին /*10 մասնակից*/
- Խորքային հարցազրույցները հարթակի մասնակիցների հետ / *8 հարցազրույց*/

Հարթակի ստեղծման նախապատմություն

«Կանանց օրակարգ՝ հանուն զարգացման» նախընտրական դեբատներ

Նոյեմբեր, 2018



Հետընտրական աշխատաժողով

Դեկտեմբեր 28-29, 2018

Աշխատաժողովի արդյունքում որոշվեց.

Դեկտեմբեր 28-29, 2018

- Ձևավորել Ազգային ժողով-հասարակական կազմակերպություններ-ՁԼՄ-ներ եռակողմ համագործակցության հարթակ, որը կգործի համակարգող խորհրդի աջակցությամբ և կազմված կլինի քաղաքական ուժերից, տեղական ՀԿ-ներից և ՁԼՄ ներկայացուցիչներից:

- Հարթակի նախաձեռնությամբ մարտի 8-ին կազմակերպել Ազգային ժողովում հանրային լսումներ «Կանանց օրակարգում» ներառված հիմնահարցերի շուրջ: Նախապատրաստական աշխատանքները կհամակարգվեն խորհրդի անդամների կողմից:

«Պատրա՞ստ եք արդյոք պաշտպան կանանց շահերը խորհրդարանում»

Հարցում ընտրված պատգամավորների շրջանում

Փոխըմբռնման հուշագրի ստորագրում

Մարտ 8, 2019

oxYGen
Government Offices of Sweden
oxYGen
ՀԱՎԱՍԱՐ ԽԹԱՆԵԼՈՎ ԿԱՆԱՆՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ
EQUAL SUPPORTING WOMEN
POLITICAL PARTICIPATION
AT NATIONAL LEVEL
IN ARMENIA
ՀԱՎԱՍԱՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ
CSO -
EQUAL

Փոխըմբռնման Հուշագրի

հիմնական դիրքորոշումները.

1. **Կողմերը պատրաստակամ են** իրենց իրավասության շրջանակներում ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը օրենսդրական նախաձեռնություններում՝ ուղղված քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կանանց իրավազորմանը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանմանը:

2. **Կողմերը համաձայն են** սահմանված պարբերականությամբ իրականացնել համատեղ հանրային միջոցառումներ՝ խթանելու երկրի զարգացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը:

3. **Կողմերը պատրաստ են խորհրդակցել** «Կանանց օրակարգ՝ հանուն զարգացման» փաստաթղթում զետեղված և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հիմնախնդիրների շուրջ, ինչպես նաև քննարկել միասնաբար իրականացվող գործողությունների կատարման ընթացքը՝ պլանավորելով հետագա համատեղ գործողությունները:

Երկու կարծիք.

«ԱԺ-ի հետ համագործակցության նման հարթակի ստեղծումը, կարծում եմ, աննախադեպ էր: Այն տրամաբանական շարունակությունն է մինչ այդ իրականացված ծրագրերի և քայլերի: Շատ կարևոր էր ընտրված պահը, երբ քաղհասարակության համար կային հարթակը ստեղծելու նպաստավոր դաշտ ու պայմաններ, և կար քաղաքական կամք Ազգային ժողովի կողմից»:

Մարգարիտա Հակոբյան

«Հարթակը կոչված է ապահովելու շատ կարևոր մշտական կապը ՀԿ-ների հետ, որոնք գործնականում տեսնում են խնդիրները և , կարծում եմ, ունեն դրանց լուծումները նախանշելու փորձագիտական ներուժը: Այլ կերպ ասած, ՀԿ-ները ունեն անհրաժեշտ գիտելիքը, փորձը, իսկ պատգամավորներն ունեն լծակներ և պատրաստակամություն՝ փոփոխություն անելու համար»:

Լենա Նազարյան

Հանդիպում.

«Կանայք աշխատանքի շուկայում, խնդիրներ և լուծումներ» թեմայով

Ապրիլի 12, 2019

Նպատակները

- Քարտեզագրել ոլորտի բարեփոխմանն ուղղված քաղաքականությունների առաջարկությունները,
- Ձևավորել համատեղ օրակարգ կանանց ներգրավածությունը աշխատանքային շուկայում խթանելու նպատակով,
- Ձևավորել ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության բարեփոխման առաջարկություններ, օրենսդրական նախաձեռնություններ:
- Անհրաժեշտության դեպքում նախաձեռնել նեղ ոլորտային աշխատանքային խմբերի հանդիպումներ:

Քննարկված հիմնախնդիրները

- Կանանց ներուժի ոչ արդյունավետ օգտագործումը և աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականության առկայությունը,
- Աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հնարավորությունների պակասը,
- Կանանց աշխատանքային իրավունքների և հնարավորությունների ապահովման ճանապարհային քարտեզը

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արդյունք N1

- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախնական հավանություն է տվել Հարթակի կողմից ներկայացված՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն տրամադրվող մինչև երկու ամիս տևողությամբ չվճարվող արձակուրդը վճարովի դարձնելու առաջարկին: Խնդրի կարգավորումը նպատակահարմար է համարվել, սակայն առաջարկվում է հավելյալ քննարկումներ անցկացնել շահակիցների շրջանում՝ այդ հարցով պայմանավորված հնարավոր ֆինանսական բեռը հաշվարկելու և իրատասեկան կարգավորում տալու նպատակով:

Արդյունք N2

- Նախարարությունը հավանություն է տվել Հարթակի կողմից ներկայացված առաջարկին՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և ծերերի խնամելու ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվարկելու վերաբերյալ: Նշվել է, որ խնդիրը բազմիցս արծածվել է նախարարությանը հասցեագրված դիմումներում և ներկայումս քննարկվում է այս հարցի կարգավորումը անձնական օգնականների ինստիտուտի զարգացման միջոցով :

Արդյունք N3

- Նախարարությունը ընդունելի չի համարել քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող անձի մայրության նպաստը վարձու աշխատողի համար սահմանված կարգով հաշվարկելու վերաբերյալ Հարթակի կողմից ներկայացված առաջարկությունը:

ՈՐՈՇՎԵՑ

- **Հունիսի 12 –ին** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշումը քննարկելու նպատակով կազմակերպել փորձագիտական հանդիպում
- **Հունիսի 25-ին**, կազմակերպել Աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների վերաբերյալ հանրային քննարկում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ:
- Անհրաժեշտության դեպքում լրամշակել առաջարկությունները՝ նորից ներկայացնելով նախարարությանը և շահագրգիռ կողմերին:

«Կանայք աշխատանքի շուկայում» - օրենսդրական լուծումներ

Ժամկետային պայմանագրեր, որոնք խոցելի են դարձնում հատկապես կանանց

- Առաջարկվել է նույն գործատուի մոտ նույն աշխատողի հետ երկուսից ավելի անգամ պայմանագիր կնքելու դեպքում այն համարել անժամկետ կնքված: Կարգավորումը ուղղված է բոլոր սուբյեկտներին, անկախ սեռից:

Տեսչական մարմնի գործառույթներ

- Պատգամավորի պնդմամբ, իդեալական տարբերակում, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պետք է տարանջատվի երկու առանձին կառույցների: Լուծումը տրված է գործո տեսչական մարմնի գործառույթների որոշակի ընդլայնման ճանապարհով:

Actio popularis-ի ներդրման հեռանկարներ

- Ներկայումս այդ ուղղությամբ ձևավորված է աշխատանքային խումբ, համատեղ քննարկվում են Արհմիությունների մասին օրենքում փոփոխությունները:

Աշխատանքային օրենսգրքի խախտման տուգանքային հոսքերի ուղղորդման առաջարկ

- Առաջարկվում է գործատուին տուգանելու արդյունքում գոյացած միջոցների զգալի մասը ստանա տուժած աշխատակիցը:

Հանդիպում.

«Տեղական ինքնակառավարման մասին»
ՀՀ օրենք

Մայիս 21, 2019

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ՀՀ Ընտրական օրենսգրքում
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում
- ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարությունով և միջոցառումների ծրագրում.

Հանդիպում.

«Կանանց վերարտադրողական առողջություն»

Հուլիսի 16. 2019

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումների շուրջ արդյունքների ամփոփում

2. «Կանանց վերարտադրողական առողջության ոլորտում քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ առաջարկների ներկայացում:

3. “ՀԱՎԱՍԱՐ” քարոզարշավի ամենամյա մրցանակաբաշխություն:

«ՀԱՎԱՍԱՐ» -ի

առաջամարտիկներ

ՀԱՎԱՍԱՐ քարոզարշավի առաջամարտիկ լինելու խորհրդանշական մրցանակներ ստացան .

Լենա Նազարյանը, Աննա Կոստանյանը, Արսեն Ջուլֆալակյանը, Գայանե Աբրահամյանը, Շաքե Իսայանը, Հերիքնազ Տիգրանյանը:

Հանդիպում.

«Ընտանեկան բռնության հիմնահարցերը Հայաստանում»

Օգոստոս 22. 2019

Հիմնական առաջարկներ

- Անհրաժեշտ է ներդնել ընտանեկան բռնության վիճակագրության միասնական հաշվառման համակարգ
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների, լրացումների իրականացման անհրաժեշտություն
- Մանկական օմբուդսմենի ինստիտուտի անհրաժեշտություն
- Դատարան դիմելու ընթացակարգերի վերանայման անհրաժեշտությունը
- Ուղղորդման կարգի վերանայման անհրաժեշտություն

Հանդիպում.

Կուսակցությունների մասին օրենքի բարեփոխում՝ գենդերային ուղղորդմամբ

Սեպտեմբեր 30, 2019

Որոշումներ, հետագա քայլեր

- Կուսակցությունների մասին օրենքի և հարակից փոփոխությունների փաթեթը ներկայացնել ԱԺ մինչև տարեվերջ, իսկ ողջ գործընթացը ընդհանուր ամռամբ կտևի շուրջ 1-1.5 տարի:

- «Կուսակցությունների մասին» օրենքի շուրջ լրացուցիչ հնարավորություն ստեղծելու նպատակով, Ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբի հետ համատեղ, հոկտեմբերի 11-ին կկազմակերպվի ընդլայնված հանդիպում՝ ներգրավելով նաև արտախորհրդարանական ուժերի, որոնք նույնպես կներկայացնեն իրենց առաջարկները բարեփոխումների վերաբերյալ:

- Առաջիկա հանդիպմանը կներկայացվեն նաև «Կուսակցությունների մասին» օրենքի գենդերային ուղղորդման հետ կապված միջազգային փորձի օրինակներ:

Քննարկում.

Կանանց քաղաքական մասնակցության խթանում.

Հոկտեմբեր 11, 2019

Հանդիպում.

«Ատելության խոսքը մեդիայում. Թիրախում կանայք են»

Դեկտեմբեր 2, 2019

Հանդիպման նպատակները

- Ներկայացնել «Սեքսիզմը և բռնությունը հեռուստաեթերում և առցանց մեդիայում. որքանով է գենդերային զգայուն հայաստանյան մեդիան» հետազոտության նախնական արդյունքները,
- Քննարկել մեդիայում և առցանց հարթակում ատելության խոսքի դրսևորումների խնդիրը,
- Հավաքագրել առաջարկներ, որոնք միտված են մեդիա հարթակներում ատելության խոսքի դեմ արդյունավետ պայքարին:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ՝

ուղղված ոլորտի բարելավմանը.

- Օրենսդրական և քաղաքական բնույթի կարգավորումներ
- Լրատվական դաշտի կարգավորումներ
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հետ կապված կարգավորումներ
- Իրավապաշտպան գործունեության հետ կապված առաջարկներ

Քննարկման արդյունքնում համաձայնեցված հետագա քայլերը

- Աշխատանքային խումբ ձևավորել վերոնշյալ հիմնահարցերի հետ կապված Ազգային ժողովում՝ ՔՀԿ-ների ներկայացուցիչների ներգրավմամբ ։

- Շրջանարել մոնիթորինգի վերջնական տարբերակը, որը կներառի նաև որակական հետազոտության արդյունքները և ոլորտը բարելավելուն ուղղված առաջարկները:

- Նախաձեռնել մյուս տարվա հունվարին ևս մեկ քննարկում այս թեմայով, հրավիրելով քննարկմանը ԱԺ պատգամավոր Վահագն Թևոսյանին, ով այժմ ուսումնասիրում է ՁԼՄ օրենսդրական կարգավորումների միջազգային փորձը և գլխավորելու է վերոնշյալ հիմնահարցերի հետ կապված աշխատանքները Ազգային ժողովում:

Հարթակի հանդիպումները՝

մասնակցության վերլուծություն

#	Ամսաթիվ	Թեմա	Մասնակիցների ըստ կառույցների	Քանակ	Ծրագիր
1	08.03.2019	ԱԺ_ՔՀԿ համագործակցության հարթակի մեկնարկ	Պատգամավոր	9	Governement offices of Sweden
			ՀԿ	35	
			Միջազգային		
			Պետական կառույց		
			Ընդհանուր	44	
2	12.04.2019	Կանայք աշխատանքի շուկայում, խնդիրներ և լուծումներ	Պատգամավոր	3	NDI
			ՀԿ	20	
			Միջազգային	3	
			Պետական կառույց	1	
			Ընդհանուր	27	
3	21.05.2019	ՏԻՄ մասին ՀՀ օրենքի փոփոխությունների առաջարկություններ	Պատգամավոր	2	WiP
			ՀԿ	21	
			Միջազգային	7	
			Պետական կառույց	2	
			Ընդհանուր	32	
4	12.06.2019	Փորձագիտական հանդիպում	Պատգամավոր	1	WiP
			ՀԿ	6	
			Միջազգային		
			Պետական կառույց		
			Ընդհանուր	7	

Հարթակի հանդիպումները՝

մասնակցության վերլուծություն

5	16.07.2019	Կանանց վերարտադրողական առողջություն	Պատգամավոր	6	WiP
			ՀԿ	25	
			Միջազգային	2	
			Պետական կառույց	9	
			Ընդհանուր	42	
6	22.08.2019	Ընտանեկան բռնության հիմնահարցերը Հայաստանում	Պատգամավոր	3	WiP
			ՀԿ	12	
			Միջազգային	2	
			Պետական կառույց	3	
			Ընդհանուր	20	
7	30.09.2019	Կուսակցությունների մասին օրենքի բարեփոխում՝ գենդերային ուղղորդմամբ	Պատգամավոր	5	WiP
			ՀԿ	8	
			Միջազգային	7	
			Պետական կառույց	6	
			Ընդհանուր	26	
8	11.10.2019	Քաղաքականությանը կանանց մասնակցության խթանում. Քննարկում	Պատգամավոր	7	NDI
			ՀԿ	15	
			Միջազգային	5	
			Կուսակցություն	7	
			Մեդիա	4	
			Պետական կառույց	6	
			Ընդհանուր	44	
9	02.12.2019	Ատելության խոսքը մեդիայում. Թիրախում կանայք են	Պատգամավոր	7	Modern Parliament for a Modern Armenia”
			ՀԿ	25	
			Միջազգային	3	
			Պետական կառույց	2	
			Ընդհանուր	37	


1
2
3
4
5
6
7
8
9
0%
10%
20%
30%
40%
50%
60%
70%
80%
90%
100%
Պատգամավոր
ՀԿ
Միջազգային
Պետական կառույց
Կուսակցություն
Մեդիա

Հարթակի գնահատականը և ակնկալիքները

1.Ձեր գնահատականը ԱԺ-ՔՀԿ հարթակ գործունեության մասին՝ 2019 թ. Մարտի 8 -ին կազմավորման պահից: Ի՞նչ ակնկալիքներ ունեիք հարթակի հետ կապված և արդարացել են արդյո՞ք դրանք:

-Դրական եմ գնահատում – 100%

-Անցած ամիսների գործունեությունն ավելի քան գոհացնող է – 60%

-ԱԺ-ՔՀԿ հարթակը անհրաժեշտություն է – 100%

-Հարթակը իսկապես ծառայել է իր նպատակին- 60%

-Ակնկալիքները լիովին արդարացել են – 60%

-Ակնկալիքները որոշակի առումով են արդարացել - 40%

-Շնորհակալ եմ, որ կաք, գործում եք ի օգուտ մեր հանրության – 5%

-Շատ կարևոր նախաձեռնություն է, որը կարևոր է շարունակել նաև հաջորդ տարի – 5%

Հարթակի ձեռքբերումները

2. **Որո՞նք են, Ձեր կարծիքով, հարթակի հիմնական ձեռքբերումները:**

- Հարթակի գոյությունն ինքնին ձեռքբերում է - 50%
- Ապահոված է եղել հանդիպումների պարբերականությունը և հետևողականությունը – 100%
- Հիմնված է եղել կարիքների վրա – 60%
- Ունի մեծ ընդգրկվածություն, կայացած և գործուն կառույց է – 40%
- Ամրապնդված և օրինակելի համագործակցություն է - 40%
- Հասարակական սեկտորի կողմից ներկայացված առաջարկությունները ընդունվում են – 60%
- Հարթակը հնարավորություն է միասնաբար քննարկելու առաջնահերթ խնդիրները - 60%
- Ապահոված է հաշվետվողականությունը և հետադարձ կապը – 100%

Առավել արդյունավետ քննարկված թեմաները

3. Կարո՞ղ եք նշել այն քննարկումների թեմաները, որոնք Դուք առավել արդյունավետ եք համարում:

-Կանանց մասնակցությունը աշխատանքի շուկայում - 80%

-ՏԻՄ-երում կանանց մասնակցությունը - 80%

-«Ատելության խոսքը մեդիայում. թիրախում կանայք են» թեման – 45%

-«Կուսակցությունների մասին» օրենքի շուրջ քննարկումը – 40%
-Ընտանեկան բռնությանը նվիրված հանդիպումը - 35%

- Թեմաները շատ լավ էին ընտրված այս տարվա ընթացքում և բխում էին համատեղ կարիքներից – 20%

Հ.Գ. Կանանց վերարտադրողական առողջության շուրջ քննարկումը թերի էր - 80%

Հարթակի թերացումները

4. Որո՞նք են, Ձեր կարծիքով, հարթակի թերացումները:

-Օրենսդրական նախաձեռնությունների վերացվող առաջարկները քիչ էին , ինչը մի քիչ հիասթափեցնող էր - 40%

-Հարթակը կենտրոնացած է միայն մայրաքաղաքում -30%

-Հարցերը, որոնք բարձրացվում են շատ այժմեական են ու կարևոր, բայց դրանց հաղթահարման ուղիները որոշ դեպքերում մշուշոտ են – 20%

-Մասնակից կին պատգամավորների թիվը քիչ է - 50%

-Տղամարդիկ քիչ են ներգրաված – 10%

-Միշտ չէ ներկա են համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչներ - 30%

-Յուրաքանչյուր խնդրի քննարկմանը քիչ ժամանակ է տրամադրվում – 10%

-Հարթակի կողմից հրատապ արձագանք չի եղել կին քաղաքական գործիչների և կին իրավապաշտպանների նկատմամբ հարձակումներին/ ատելության խոսքին/ -5%

-Չեմ տեսնում թերացումներ – 10%

Կարծում եմ, մեծ բացթողումներ չեն եղել – 10%

Խոչընդոտներ

5. **Ի՞նչ խոչընդոտներ եք տեսնում հարթակի գործունեությունը կազմակերպելու հարցում և ինչպե՞ս կարելի է դրանք հաղթահարել**

-Հարթակը սահմանափակ ռեսուրսներով է գործել Ֆինանսական ռեսուրսների պակաս – 30%

-Առանց ռեսուրսների հնարավոր չէ մարզերի մասնակիցների համար կարգավորել տրանսպորտային ծախսերի հարցերը- 10%

-Խոչընդոտը գործողությունների դանդաղ ընթացքն է: Պետք է իշխանություններին պարտադրել՝ հաշվի նստել հարթակի հետ – 5%

-Կողմերի խիստ զբաղվածությունը, օրվա գրաֆիկի գերհագեցվածության հետևանքով հնարավոր չի լինում մասնակցել հարթակի որոշ հանդիպումներին – 20%

-Կարծում եմ խոչընդոտներ չկան – 60%

-Չկան այնպիսի խոչընդոտներ, որոնք մենք չենք կարող հաղթահարել – 5%

Առաջարկություններ հարթակի արդյունավետությունը բարձրացնելու մասին

- Հարթակի մասնակիցների կազմի մասին
- Բովանդակության ապահովման մասին
- Թեմաների ընտրության մասին
- Այլ ֆորմատների և գործունեության այլ ձևերի մասին
- Հրապարակայնության մասին
- Կարողությունների զարգացում

Առաջարկություններ

- 1. 2020 թվականի գործունեությունը պլանավորելիս անպայման պետք է անդրադառնալ 2019 թվականի ընթացքում հարթակի կատարված աշխատանքի գնահատմանը: Անհրաժեշտ է հասկանալ քննարկած թեմաներից կետերից որոնք են ավելի արդյունավետ կատարվել, իսկ որոնք ոչ: Ինչպես նաև հասկանալ թե ինչ կարելի է անել համագործակցությունը ամրապնդելու և ավելի արդյունավետ դարձնելու համար:
- 2. Ուզում եմ հարթակը դիտարկվի որպես բոլորի հարթակ
- 3. Տղամարդկանց պետք է ներգրավել
- 4. Փակ լինելը առավելություն է, բայց որոշ հարցերում արժե հրապարակայնություն ապահովել
- 5. Եթե կոնֆիդենցիալ հարց չկա կարելի է քննարկումները ուղիղ եթերով հեռարձակել, և քննարկումներին ինչ որ ձևով մասնակից դարձնել լայն հանրությանը, որպեսզի հասկանալի լիներ, որ Ազգային ժողովում նստած կանայք խնդիրներ են լուծում և նրանց հետ պետք է հաշվի նստել:
- 6. Հարթակը կարող է հրատապ հարցերով հայտարարություններով հանդես գալ
- 7. Կազմակերպել պատգամավորների համար միջազգային փորձի և թեմային առնչվող միջազգային փաստաթղթերի ներկայացում

Առաջարկություններ

- 8. Ավելացնել մարզային կանանց ներգրավվածությունը, հատկապես համայնքային, որոնց հրավիրելու և ներգրավելու համար ավելի շատ աշխատանք է պետք տանել:
- 9. Ավելի արդյունավետ լինելու համար կարելի է կազմակերպել արտագնա այցեր մարզեր, նաև ներառելուվ տվյալ մարզերի համար կարևոր հարցեր, նաև հարթակի օրակարգում առկա խնդիրները թիրախային խմբերի հետ քննարկելու համար:
- 10. Ավելի շատ կին պատգամավորներ ներգրավվել, հատկապես նրանց, ովքեր չեն կիսում հարթակում հնչեցվող դիրքորոշումները : Պատգամավորները պասիվ են, ընդլայնել պատգամավորների մասնակցությունը
- 11. Ավելի բովանդակային դարձնել քննարկումները
- 12. Ավելի լավ պատրաստվել զգայուն հարցերի շուրջ , օրինակ վերարտադրողական իրավունքի թեմայով
- 13. Ավելի բովանդակային դարձնել քննարկումները: Ստեղծել աշխատանքային խմբեր առավել մասնագիտական քննարկումներ պահանջող հարցերի շուրջ և անհրաժեշտության դեպքում խորհրդարանական լսումներ հրավիրել:
- 14. Աշխատանք տանել ավելի մեծ թվով առաջարկությունները օրենսդրական նախաձեռնությունների դարձնելու համար

Առաջարկություններ

- 15. Հարթակի կողմից ներկայացվող առաջարկները միասնական փաստաթղթի տեսքով ներկայացնել
- 16. Ավելի շատ առաջարկներ գեներացնել, ինչը էլ ավելի կբարձրացնի գործունեության արդյունավետությունը
- 17. Ավելի հաճախակի դարձնել հարթակի հանդիպումները:
- 18. Կարելի է ստեղծել առցանց հարթակ, որպեսզի օրակարգն ավելի ճկուն լինի և ընթացիկ խնդիրները հնարավոր լինի քննարկել և առաջարկներ ներկայացնել հենց այդ հարթակում: Այնուհետև այդ ամենն ամփոփել ավելի լայն ֆորմատով հանդիպումներով:
- 19. Քննարկվող թեմաները պետք է նախապես դրվեն քվեարկության, թե արդյոք որքանո՞վ առաջնահերթ և հրատապ են, կա՞ արդյոք անհրաժեշտություն տվյալ հարցը օրակարգ մտցնելու:

20 Կանանց իրավունքների հետ կապված կազմակերպությունների հետ կապերի ընդլայնում՝ օրինակ՝ Օմբուդսմենի, Կառավարությանը կից կանանց իրավունքների խորհրդի և այլ ցանցային մարմինների հետ համագործակցելու տեսանկյունից:

- ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ